

մեն գերագույն գիտական հաստատությանց մարմիններուն:

Հայկական ուսումնասիրությանց զարկ տալու համար, պրոֆ. Վ. Բընըշիանու պիտի շանա հարմարագույն առիթի օգտագործել կազմելու համար գիտական ընկերություն մը «Հայկական ուսումնասիրությանց» նվիրված, որուն կորիգը պիտի կազմեն լավագույն ուսանողները և Խնամփառութիւն ապագա դա շրջանավարտները և ուրիշ հայեր, որոնք իշահագրութիւնն այս տեսակ ուսումնասիրություններով:

Կան և դժվարություններ, որոնք պիտի հաղթահարվին. օրինակ՝ դասագրքերու պակասը, ինչպես նաև՝ բնագրերու Ասոր լուծումն է՝ կարգ մը ընտիր բնագրերու վերաբատարակությունը, փոքր թվով տեսակ մը հավաքածոյի կազմություն, իսկ դասագրքերու համար պետք է սպասենք հնարավորություններ ստեղծելու արտասահմաննեն ստացման և կամ հոս՝ Ռումանիո մեջ տպագրուման համար:

Գալով դպրոցական նոր տարեշրջաննեն, Խնամփառութիւն առաջին նիստին որոշվեցավ, որ դասընթացքը սկսվի հոկտեմբեր 1-ին,

արձանագրությունները շարումակելով մինչև սեպտեմբեր 30, Առաջին տարին լրացնող ուսանողները պիտի արձանագրվին երկրորդ տարվան դասընթացքին համար, իսկ վերոհիշյալ թվականին բոլորովին նոր արձանագրվիլ փափառված պետք է Խնամփառությունները պետք է Խնամփառության ասուհանին վրա գտնվելու դիտավորությամբ:

Այս ուսանողները, որոնք հետաձգած էին իրենց քննությունը աշնան նստաշրջանին, պետք է ներկայանան Խնամփառության պարտության՝ Nic. Iorga, №. 21, սեպտ. 20—30.

Կուսանսք, թե հայ երկտասարդությունը պիտի դիմավորե ավելի մեծ շահագրգությամբ դասական հայերնի դասընթացքի երկրորդ տարին: Այս գեղեցիկ գործին նախաձեռնողներն են եղած Ռումեն բարձրագույն գիտական մարմինները, որոնք այս երկրի համակենցաղ ազգություններուն կընծանեն լավագույն զարգացման մը բարձր հնարավորությունները:

«Հայաստանյան նակատ».

25 սեպտ. ի 1949 թ.:

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԴԵՊԻ ԵՎՀՈՊԱ

«Ես ծառան եմ իմ կարգին և իմ ժողովրդին»:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Դարձյալ մեծ եռուզեռ մը կա Կիլիկիո Կաթողիկոսարանին մեջ, Վանական գործեր պահ մը կանգ կառնեն և Դպրեվանքի թե Ազգ. Մեսրոպյան Նախակրթարանի ուսանողությունները, Տպարանի ու վանական այլ հաստատությանց գործավորները դաս ու գործ ձգած կուղղվին Վեհարան: Եպիսկոպոս, վարդապետ, քահանա ու սարկավագներ տոնական օրերու հանդիսավորությամբ տեղ բնած են Վեհարանին մեջ: Ինքնաշաղթածներու շարանը ծայր կուտա և վանքին բակը կլեցուի հայ եկեղեցական ու աշխարհական դասերուներկայացուցիչներով, որոնք եկած են հարդանքի իրենց տուրքը վճարելու Կիլիկիո Գահակալ Վեհափառ Հայրապետին, որովհետեւ անիկա պիտի մեկնի Եվրոպա, առողջական և վանական այլ և այլ գործերու հետ կապված պատճառներով:

Այցելումներու աշխին մեջ կպրիսմակի ու բախության արցումքներուն ծիածանվիր,

որովհետեւ Կիլիկիո գաղթական կաթողիկոսությունը սկսած է վերճառնել և իր դարերու առաջելության նկրտիդ հարյուրի ավելի իր ուսանողական ու միաբանական կազմով:

Հոն են Կիլիկիո Կաթողիկոսության Կենտրոնական Կաթողիկության հարգելի Ատենաապետ՝ Տիար Տաճատ Սրապյան, Լիքանանի Կրոնական ժողովու արժանապատիվ հայերն ու Քաղաքական ժողովու Դիվանի անդամները, Կաթ. Փոխանորդ՝ Գեր. Տ. Խաղ. Արքապիսկոպոսը, նոր Հաճըն, Թիրու, Ռումելի և Մազրա թաղերու և Զահել քաղաքի թաղական Խորհուրդները, Հ. Բ. Ը. Ըիստմյան Շրջանային, Տեղական, Կրթական Յանձնախումբի, Տիկնանց և Օրիորդաց օժանդակ, Անդր նահանքի վարդությանց և այլ ճյուղերու ներկայացուցիչները, Հ. Ե. Ընկերակցության Բեյրութի և Ամադ նահանքի զանազան վարչությունները, Թիերեյան Մշակութային Տան Արանց և Կանանց մասնաճյուղերը և այլ կաղմակեր-

սրություններու ներկայացուցիչներ և անհատ անձինք:

Ջոյք զանգակիներու զողանչը՝ դուրսը՝ հաճա- ղիսավոր պահը երբ կավետե, ներսը՝ Վեհա- փառ Հովկապետը իր առանձնասենյակին մեջ կընդունի Միաբանության անդամներն ու Դպրեվանքի ուսուցչական կազմը և անոնց յուրաքանչյուրին կուտա իր հայրապետական օրհնություններն ու թելադրությունները և ծափահարությանց տարափին ընդմեջն մուտք կործե Վեհաբանի դաշիճը ու կիու- սի՝ իրեն ողջերթի եկած և զինք սպասող հասարակության և աշակերտության՝ պար- զելով անոնց իր նվորա ուղեւորության նպատակը: Խոր հուզումի ընդմեջն կը լսվի Անոր ձայնը, որով կապավինի իր հոտի ա- զոթքին. «Ազութեցեք որ արժանի լինեմ Զեր իմ վրա ունեցած համակրանքին: Ես ծառան եմ իմ կարգին և իմ ժողովրդին»:

Ժամանակը հասած է և պետք է աճապա- րել դեպի օդակայան, Վեհը, առաջնորդու- թյամբ Միաբանության անդամներուն, կիշնե Ա. Տաճար և ավագ սեղանի առջև ծնրադիր ու արտասվաթոր կազոթի... Վեհը վերացած է. կիսուի Աստուծո հետ և Անկե կհաւցե ան- րույթ ձանապարհորդություն. — Տէ՛ր, ուղինա զնացս մեր....

Հոգեոր և աշխարհական հետեւորդներու աշքերեն կհսուին արցունքներ: Կենտրոնական վարչության Աստենապետ՝ Տիար Տաճար Սրապյան չի կրնար նույնպես զսպել իր արցունքները և երբ Տաճարին դուրս կուգա՝

այսպիս կարտահայտվի. «Հավատացյալ և անկեղծ հոգևորական մը, որ կհավատա իր դործին և կապրի միայն իր ժողովրդին ու Եկեղեցին համար»:

Վեհափառ Հայրապետը դուրս կուգա Մայր Տաճարեն և կբազմի իր անձնական կառքին մեջ:

Յոթանասունէ ավելի ինքնաշարժներու շարանը, առաջնորդությամբ չորս մոտոցիկ- լիստներու, կշարժի դեպի օդակայան, անց- նելով նահարի հայկական պողոտային ու կա- մուրջին, — ուր Վեհը կարժանանա ժողովր- դական, ուսանողական և սկառատական կազմակերպությանց հարգանքի արտահայ- տությանց — Բուրջի վրայով կհասնի օդա- կայան:

Օդանավ բարձրանալու միջոցին Հ. Բ. Ը. Միության Կանանց և Օրիորդաց օժանդակն ու Թեքելան Մշակութային Տան Կանանց բա- ժինը Վեհափառին կմատուցանեն շքեղ ծաղ- կեփունչեր, մաղթելով Անոր բարի երթու- ղարձ:

Վեհը բոլորի ծափահարությանց ընդմեջն թոփշ կամնե օդին մեջ դեպի Եփիպտոս, ըն- կերակցությամբ Դպրեվանքի Տեսուչ՝ Գեր. Տ. Գերենիկ Եպիսկոպոսի, 1950 մայիսի 12-ին, կեսօրվան ժամը 12.45-ին:

Բարի և հաջող առաքելություն ու վերա- դարձ կմաղթենք մեր և ամենուն սիրելի Հայ- րապետին:

9.

(«Հասկ», 1950 թ., № 5, էջ 152—153)

